

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Բեյրութից՝ ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Տ. Գնել եպս. Ճերեճյանը: Սրբազան հորը Երևանի օդանավակայանում դիմավորում է Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Ապրիլի 4-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն.

Այսօր, օրվա մեծ տոնի առիթով, Մայր տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր աթոռում գտնվող Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Այսօր զիմանալի լուսոյն ծագողն ի խաւարի նստելոցս» (Շարական) բնաբանով:

Հայր սուրբը իր քարոզում խոսում է Ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանքների, տոկուն կամքի ու ճշմարիտ հավատքի մասին՝ որպես օրինակ հավատացյալներին:

Պատարագից հետո հոգևոր ճեմարանի ողջ ուսանողությունը, ղեկավարությամբ ճեմարանի ընդհանուր դաստիարակ Տ. Ստեփանոս աբեղայի, ուխտի է մեկնում դեպի Խորվիրապի վանք՝ իր հարգանքի և նվիրումի տուրքը մատուցելու Հայաստանյայց Եկեղեցու հիմնադրի սուրբ հիշատակին: Ուսանողները իջնում են նաև Արտաշատի պատմական վիրապ, ուր երկար տարիներ չարչարվել էր Մեծ Սուրբը:

*
* *

Ապրիլի 5-ին, կիրակի.—Զ կիրակի Քառասնորդական Պահոց (Գալստեան).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը՝ «Որ ըզխորհուրդ քո գալստեանդ՝ յառաջագոյն գուշակեցեր» (Շարական) բնաբանով:

*
* *

Ապրիլի 7-ին, երեքշաբթի.—Աւետումն Ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, օրվա տոնի առիթով, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

*
* *

Ապրիլի 8-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ: Զեկուցումով հանդես է գալիս Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Տ. Մասիս վրդ. Գալըստյանը՝ Ս. Հռիփսիմե վանքում կատարված վերանորոգչական աշխատանքների մասին:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Գնել եպս. Ծերեճյանը մեկնում է Հունաստան՝ տանելու Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները և նախագահելու զատկական հանդիսություններին և «Բանին կենաց» քարոզությամբ մխիթարելու հավատացյալներին:

*
* *

Ապրիլի 11-ին, շաբաթ.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ: Նիստին հրավիրվել էր Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ և գլխավոր հաշվապահ պարոն Գառնիկ Քեհյայանը, որը հանգամանալից ձևով ներկայացնում է Մայր Աթոռի 1980 թ. բյուջեի կատարողականը՝ և 1981 թ. նոր բյուջեի նախագիծը:

Սույն նիստին հրավիրվել էր նաև Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ պարոն Արծրուն Գալիկյանը, որը նույնպես ներկայացնում է Մայր Աթոռից ներս և նրա սահմաններից դուրս կատարված շինարարական աշխատանքները և 1981 թ. կատարվելիք աշխատանքների նախագիծը:

Գերագույն հոգևոր խորհուրդը, լսելով պրն. Գառնիկ Քեհյայանի և պրն. Արծրուն Գալիկյանի զեկուցումները, հաստատեց Մայր Աթոռի 1981 թ. բյուջեի և նույն տարվա ընթացքում կատարվելիք շինարարական աշխատանքների նախագծերը:

Վերջում Գերագույն հոգևոր խորհուրդը իր գոհունակությունն արձանագրեց Մայր Աթոռի երկու կարևոր բաժինների պատասխանատու և ղեկավար աշխատողների գործունեության առթիվ՝ հոգուտ Մայր Աթոռի և ի պայծառություն Ս. Էջմիածնի:

*
* *

Ապրիլի 12-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի առիթով, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Օրհնեա՛լ որ գայ թագաւորդ յանուն Տեառն» (Ղուկ. ԺԹ 38) բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում, երեկոյան ժամերգությունից անմիջապես հետո, կատարվում է «Դոնբացէք»-ի ավանդական հանդիսությունը, որի ընթացքում բացվում է Ավագ խորանի մեծ վարագույրը:

*
* *

Ապրիլի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Ապրիլի 16-ին, հինգշաբթի—Աւագ հինգշաբթի. Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, միջօրեի ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

Այս տարի ևս Մայր Աթոռում ավանդական շուքով և հանդիսությամբ կատարվում են Ավագ շաբաթվա եկեղեցական արարողությունները՝ մասնակցությամբ Մայր Աթոռի ողջ միաբանության և հոգևոր ճեմարանի ուսանողության:

Երեկոյան ժամը 17-ին կատարվում է «Զկարգ Ոտնալուայի»՝ նախագահությամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի: Ս. պատարագի ընթացքում ընթերցվում է Ս. Բարսեղ Կեսարացու ճառը՝ նվիրված օրվա խորհրդին:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, կատարվում է գիշերային հսկումի կարգը: Մայր տաճարը լիքն է աղոթավոր բազմությամբ: Հանդիսությամբ կատարվում են Քրիստոսի մատնությանը նվիրված Նոր

Կտակարանի ընթերցումները, շարականներն ու աղոթքները:

«Փառք ի բարձունս»-ից հետո «Հա՜յր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն» (Ղուկ., ԻԳ 34) բնաբանով բովանդակալից քարոզ է խոսում Տ. Ստեփանոս աբեղա Զաքալյանը՝ վեր հանելով Քրիստոսի մատնության գիշերվա փրկարար նշանակությունը:

* * *

Ապրիլի 17-ին, ուրբաթ.—Աւագ ուրբաթ. Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր, առավոտյան, Մայր տաճարում կատարվում է «Կարգ Խաչելութեան» արարողությունը, իսկ երեկոյան ժամը 17-ին՝ «Թաղման կարգը», և ապա մեծ հանդիսությամբ՝ «Թափոր թաղմանն»՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի և մասնակցությամբ ողջ եկեղեցական դասի ու ճեմարանի ուսանողության:

* * *

Ապրիլի 18-ին, շաբաթ.—Աւագ շաբաթ. Ծրագալոյց Զատկի.

Այսօր, երեկոյան, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ճրագալույցի ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

Ս. պատարագից առաջ հոգևոր ճեմարանի 4 ուսանողներ հանդիսավորությամբ ընթերցում են Դանիել մարգարեի «Երից մանկանց» օրհներգությունը, որի ավարտին Հարության ավետիսով բացվում է Ավագ խորանի վարագույրը և սկսվում իրիկնադեմի ս. պատարագը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Զատկի նախատոնակի արարողությունը, և Մայր տաճարի մեջ հնչում է Հարության մեծ ավետիսը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց...»:

Երեկոյան, ընթրիքի ժամին, վանական սեղանատանը օրհնվում է զատկական սեղանը, և Մայր Աթոռի միաբաններն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը ճաշակում են Զատկի նավակատիքի ընթրիքը:

* * *

Ապրիլի 20-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Արտակ բին. Սիմոնյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Ապրիլի 26-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր կիրակէ).

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս աբղ. Զաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Քաջալերեցարո՛ւք, զի ես յաղթեցի աշխարհի» (Հովհ. ԺԶ 33) բնաբանով:

«Զկնի սրբոյ պատարագի» կատարվում է հոգեհանգիստ՝ համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմների մեր բյուրավոր նահատակների հիշատակին: